ՆՈՐ-ԴԱՐ

№ 72 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 11 Մայիսի **1889** Հինգշաբթի 11 Մայիսի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 72

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., Համով 5 կոպեկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում մխիթարեան խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների գնահատութիւնը 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ։
Քրոնիկոն.—Լուրեր։ Դրիզոր Աբգրունեան և իւր Թերթը։ Մուսա-Բէյ։ Նամակ խմբագրութեան։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Երեկոյեան հեռագիրներ։
Բանաստեղծական. — Խորհրդաւոր միանձնուհի (չարուն.)։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԲՕԽՈՒՄ, 8 Հայիս.—Բանուորների պատգամաւորները որոշում կայացրին, որի մէջ յայտնւում, որ ածխափոր բանուորներից յանձնաժողով կազմուելը համակրութիւն չէ գտել հանքային շահերի մխրճեան վարչութեան մէջ։ Ընդունելով Վիլհելմ կայսրի ասած քաղաքական գեղեցիկ խօսքերին, եթէ երկու ամսուայ ընթացքում բանուորների պայմանները չիրագործուին, այն ժամանակ նոր գործադուլ կառաջանայ։

ՊԱՐԻԶ.—Լօմբարդիայում հողային անկարգութիւնները կրկնուեցան։ Կօրբէտտում ժանդարմների և գիւղացիների ընդհարում պատահեցաւ, որի միջոցին գիւղացիներից մի հոգի սպանուել է և երեք հոգի վիրաւորուել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 Հայիս.—Թագաժառանգը Նորին Մեծութեան Փլեգել - ադիւտանտ է նշանակուած։

Վերջին ժամանակներս ռուսաց մամուլի, մանաւանդ «Моск. Вѣд»-ի մէջ Ֆինլանդիայի և նրա վարչական անձերի մասին հրատարակուած յօդուածների առթիւ, Մեծ-Իշխանութեան գեներալ-նահանգապետը, որպէս ֆինլանդական կայսերական սենատի նախագահ, իւր մատուցած ամենախոնարհ զեկուցման մէջ յայտարարում է, որ սենատի իշխանութեան, երկրի երկրորդակարգ յայտարարութիւնների հրատարակութեան միջոցին Բարձրագոյն մանիֆեստաւ ի չարը գործադրուելու և առհասարակ, երկրի կառավարութեան մասին տեղեկութիւնները ճիշդ չեն։ Երկիրը կառավարւում է օրէնքներով հաստատուած կարգով, ճիշդ չէ նոյնպէս և այն, թէ սենատը հասարակ դասակարգի վերջին հիւթն է ծծում։

Ներկայումս դրուած տուրքերի ծանրութիւնն աւելի նուազ է, քան երբ և իցէ, մանաւանդ որ ժողովուրդը միշտ օրինական պաշտպանութիւն է ստանում հնարաւոր անիրաւութիւնների դէմ և կառավարութիւնն անպատիժ չէ թողնում ծառայական թերութիւնները։ Նոյնպէս ճիշդ չէ այն, որ իբր թէ միայն պաշտօնեանեից վրդ մասն է միայն համալսարանական ուսում ստացած։ Իսկ ինչ վերաբերում է զէմստվային պաշտօնեաներին, նրանք ընդհանուր համակրութիւն են վայելում։

ՄՕՍԿՈՒԱ.—Այսօր ցերեկուայ ժամը 2½-ին Պարսից Շահը Մոսկուա հասաւ և ընդունուեց գեներալ-նահանգապետի, զօրքերի հրամանատարի, գեներալիտէտի և քաղաքի ու դասակարգերի ներկայացուցիչների կողմից։ Քաղաքգլուխը փորագրուած փայտէ ափսեով աղ ու հաց մատոյց։

Շահը այսօր ճաշեց գեներալ-նահանգապետի մօտ և ներկայ է լինելու մեծ թատրոնում տրուելիք հանդիսաւոր ներկայացմանը։

ԲԵՐԼԻՆ.—Իտալական թագաւորը Սէն-Գօթարդի ներքնուղով ժամանեց Զուիցերիական երկաթուղային Գօշենէն կայարանը։ Նախաճաշին դաշնակցութեան նախագահը ողջունեց թագաւորին և թագաժառանգին։ Նախաճաշից յետոյ թագաւորը Գաշէլի վրայով ուղևորեցաւ։

ՊԱՐԻԶ.—Ֆրանսիական թերթերը նախատեսում են, որ իտալական թագաւորի Բերլին ուղևորելու միակ հետևանքը կլինի Իտալիայի զինուորական ծախսերի յաւելումը։

ԱԹԷՆՔ.—Այստեղ ստացուած հեռագիրները հաղորդում են, որ Մակեդոնիայումանկարգութիւնները են պատահել և հաւանական են համարում, որ Աւստրիան իւր զօրքերով գրաւէ Նովո-Բազարեան սանջաքը։

ԲԵՐԼԻՆ. — Իտալական Հումբէրտ թագաւորը և ժառանգը այսօր տեղս ժամանեցին և ընդունուեցան մեծ հանդիսաւորութեամբ։ Ընդունելութեան կայսրի, բոլոր պրինցների, կայսերական կանցլերի, բոլոր մինիստրների և գեներալիտէտի կողմից։ Տօնական ձևով զարդարուն փողոցները լցուած էին խուռն ժողովուրդով, որ ողջունում էր թագաւորին։

(Երեկ. հետ. չորրորդ երեսում)

ՔՐՈՆԻԿՈՆ

Վերջին մի քանի պաստով ստացուած թէ մայրաքաղաքի և թէ գաւառական բոլոր ռուս թերթերը լիքն են հանդուգնալ Սալտըկովի (Շչեդրինի) յիշատակին նուիրուած յօդուածներով։ Զկայ մի թերթ, նոյն իսկ հակառակ կուսակցութեան թերթերը, որ վերին աստիճանի համակրական, ջերմ յօդուածներ չնուիրէին Ռուսիայի ամենամեծ և ամենասիրելի հեղինակին — ճշմարտութեան, արդարութեան, իրաւունքի համար նուիրուած անձնազոհ գրագէտի յիշատակին։ Ողբում են այդ մեծ գրողի մահը, գրողի՝ որ մինչև իւր վերջին շունչը, նոյն իսկ մահուան անկողնում անգամ, մտածում էր հասարակական խնդիրների, հասարակութեան թոյլ կողմերի վրայ։ Շչեդրինը—մի ամբողջ աշխարհ էր։ Շչեդրինը—մի ամբողջ բանակ էր։ Նա իւր ասպարէզ մտած օրից մինչև մահուան րոպէն միշտ հաւատարիմ մնաց իւր դրօշակին, որի վրայ գրած էր ազատախոհութիւն, արդարութիւն, իրաւունք, մարդասիրութիւն։ Շչեդրինը մինչև իւր մահուան րոպէն իւր անձին օրինակով քաջալերել, ոգևորել է թոյլերին և երբէք յաւատացած չէ անաջող հանգամանքներում, երբ բոլորը իւր չորս կողմում յուսահատութեան մատնուելու մօտ էին լինում։

Հազիւ թէ Ռուսիայում եղած լինի մի գրող, որ այնքան բազմակողմանի կերպով չօշափած լինի հասարակութեան բոլոր խաւերի համարեա բոլոր կողմնրը—մերկացնելով սուտ թիւնը, վատութիւնը, խարդախութիւնները։

Շչեդրինը մի հսկայ էր ռուս կեանքի և գրականութեան մէջ, որի նմանը հազիւ են դարերը ծնում։

Պետերբուրգի և առհասարակ բոլոր Ռուսիայի հասարակութիւնը իւր խոր վիշտը և ցաւը յայտնել է բազմաթիւ հեռագիրներով, նամակներով, պատգամաւորներով, պսակներով և նրա անուանը սուիպէնդիա հաստատելու համար սկսած հանգանակութիւններով։

—

Նորին Մեծութիւն պարսից Շահը Թիֆլիս եղած միջոցին այցելից ի միջի այլոց և ս. Նունէի ուսումնարանը, որից, ինչպէս երևում է, գոհ է մնացել։ Նորին Մեծութիւնն իւր գոհունակութիւնը յայտնել է նուիրելով յիշեալ ուսումնարանի հոգաբարձուհի Ն. Բ. Շերեմետեւային չոզնակով զարդարուն վիրոյզ մի մատանի, իսկ ուսումնարանի կառավարչուհի Վ. Ա. Տատիչչևային՝ մի թանկագին չալ։

—

Մեզ գրում են։—Թիֆլիսի հայ արհեստաւորների և առևտրականների մէջ սովորութիւն կայ, որ ամեն մի համբառնութիւն Զատկից յետոյ մինչև Համբարձումը, երկուշաբթի օրերը հերթով տօնում են և մասաղ բաժանում աղքատներին և միասին գնում են քէֆ անելու։ Թիֆլիսի հաճագործները (մեբէչչիկ) թ-

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՄԻԱՆԶՆՈՒՀԻ *)

—

Ցունիս 15.

Հէյֆէլբուրգ օր.

—

Ողբան մատանդութեան պատճառ դարձան ինձ համար Վարդկինի բաժանման րոպէին արտասանած վերջին խորհրդաւոր խօսքերը։ «Սրբութիւնը իւր երկրպագուից չի անարգուիլ», ասաց նա։ Ո՞վ էր արդեօք այդ «երկրպագուն», կարծէք էլ միթէ յուսալ, որ դա նա ինքն է։ Իսկ դրա համար ունէի ես մի ապացոյց, մի թոյլ փաստ, աւազ և ոչ մի։ Եթէ նա բաժանում լինէր իմ զգայունութիւնից, ինչու ուրեմն դիտմամբ պիտի հեռանար ինձանից։ Նա ամենալաւ պատրուակն ունէր՝ մեզ մօտ յաճախելու, միշտ ինձ հետ տանուելու.—նա իմ ուսուցիչն էր։ Բայց նա ոչ միայն այդ պաշտօնից չկամեցաւ օգտուել, այլ և ինձանից բոլորովին հեռանալու համար՝ կիսաւ թողից իմ ուսման գործը։ Միթէ արդարև ես էլ սովորելու ոչինչ չունէի... բայց չէ. նա չկամեցաւ իւր յաճախակի այցելութիւններով առաւել ևս բորբոքել միանգամ արդէն վառուած կրակը։ Անարդանք էր այս՝ ուղղուած դէպի իմ անկեղծ խոստովանութիւնը, թէ բարձրագոյն աղնուութեան ապացոյց, որ չկամեցաւ իւր բարոյական խնամքին և զաստիարակութեան յանձնուած մի օրիորդի թուլութիւնից օգտուել. ճիշդը չկիանի։ Բայց ես առհասարակ հակուած էի դէպի վերջին կարծիքս։

Անցաւ մի ամբողջ չարաթ և ես Վարդկինին տեսնել չկարողացայ։ Նա մեզ մօտ չկաւ. իսկ ես նրան պարտիզ չէի կարող։ Մի քանի անգամ մտածեցի այցելել օրիորդաց դպրոցը, նրան տիտղոս պատահելու յուսով. բայց պատուաբերութեան զղայնութիւնս թոյլ չտուաւ ինձ։ —«Ինչու համար այդ տասիճան տառապանալ», ասացի ես. «եթէ նա պատճառներ է տեսնում ինձանից հեռու մնալու, միթէ կը վայելէ, որ ես պարտամ նրան ի հարկէ, ոչ. զուցէ իւր այդ վարմունքով նա կամեցել է զդալ տալ ինձ՝ որ իմ մասին բնաւ չէ մտածում. ինչու ուրեմն քաջութիւն չունենալ նրան մոռացութեան տալու»... Եւ ես հաստատ որոշում էի աշխատել նրան մոռանալ...

Բայց միթէ արդարև այդ հնարաւոր էր. միթէ ես այդ կարող էի անել։ Այդ տեսակ որոշումներն ոչ այլ ինչ էին, եթէ ոչ բռնի փորձեր՝ նեղքին հրդեհի դէմ մի քանի ժամերով միայն թուլացնելու։

Անցնում էին այդ ժամերը, և ահա հրդեհը զարձեալ բորբոքում, զարձեալ նոր ուժով երեան էր գալիս։ Մանաւանդ երբ մտածում էի, որ իմ այդ վիճակիր պատճառներն անհնազանդ հիւանդներ էին՝ համեմատած այն հոյակապ առաքինութիւնների հետ, որոնցով զարդարուած էր երիտասարդը, և որոնք վառել էին իմ մէջ այս չարաբաստիկ սիրոյ կրակը...

Ինձ միտում էր լուռ և անարատնջ

*) Տես «Նոր-Դար» № 70։

ցինելից մի հոգի սպանուել է և երեք հոգի վիրաւորուել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 Հայիս.—Թագաժառանգը Նորին Մեծութեան Փլեգել - ադիւտանտ է նշանակուած։

Վերջին ժամանակներս ռուսաց մամուլի, մանաւանդ «Моск. Вѣд»-ի մէջ Ֆինլանդիայի և նրա վարչական անձերի մասին հրատարակուած յօդուածների առթիւ, Մեծ-Իշխանութեան գեներալ-նահանգապետը, որպէս ֆինլանդական կայսերական սենատի նախագահ, իւր մատուցած ամենախոնարհ զեկուցման մէջ յայտարարում է, որ սենատի իշխանութեան, երկրի երկրորդակարգ յայտարարութիւնների հրատարակութեան միջոցին Բարձրագոյն մանիֆեստաւ ի չարը գործադրուելու և առհասարակ, երկրի կառավարութեան մասին տեղեկութիւնները ճիշդ չեն։ Երկիրը կառավարւում է օրէնքներով հաստատուած կարգով, ճիշդ չէ նոյնպէս և այն, թէ սենատը հասարակ դասակարգի վերջին հիւթն է ծծում։

Ներկայումս դրուած տուրքերի ծանրութիւնն աւելի նուազ է, քան երբ և իցէ, մանաւանդ որ ժողովուրդը միշտ օրինական պաշտպանութիւն է ստանում հնարաւոր անիրաւութիւնների դէմ և կառավարութիւնն անպատիժ չէ թողնում ծառայական թերութիւնները։ Նոյնպէս ճիշդ չէ այն, որ իբր թէ միայն պաշտօնեանեից վրդ մասն է միայն համալսարանական ուսում ստացած։ Իսկ ինչ վերաբերում է զէմստվային պաշտօնեաներին, նրանք ընդհանուր համակրութիւն են վայելում։

ՄՕՍԿՈՒԱ.—Այսօր ցերեկուայ ժամը 2½-ին Պարսից Շահը Մոսկուա հասաւ և ընդունուեց գեներալ-նահանգապետի, զօրքերի հրամանատարի, գեներալիտէտի և քաղաքի ու դասակարգերի ներկայացուցիչների կողմից։ Քաղաքգլուխը փորագրուած փայտէ ափսեով աղ ու հաց մատոյց։

Շահը այսօր ճաշեց գեներալ-նահանգապետի մօտ և ներկայ է լինելու մեծ թատրոնում տրուելիք հանդիսաւոր ներկայացմանը։

ԲԵՐԼԻՆ.—Իտալական թագաւորը Սէն-Գօթարդի ներքնուղով ժամանեց Զուիցերիական երկաթուղային Գօշենէն կայարանը։ Նախաճաշին դաշնակցութեան նախագահը ողջունեց թագաւորին և թագաժառանգին։ Նախաճաշից յետոյ թագաւորը Գաշէլի վրայով ուղևորեցաւ։

ՊԱՐԻԶ.—Ֆրանսիական թերթերը նախատեսում են, որ իտալական թագաւորի Բերլին ուղևորելու միակ հետևանքը կլինի Իտալիայի զինուորական ծախսերի յաւելումը։

ԱԹԷՆՔ.—Այստեղ ստացուած հեռագիրները հաղորդում են, որ Մակեդոնիայումանկարգութիւնները են պատահել և հաւանական են համարում, որ Աւստրիան իւր զօրքերով գրաւէ Նովո-Բազարեան սանջաքը։

ԲԵՐԼԻՆ. — Իտալական Հումբէրտ թագաւորը և ժառանգը այսօր տեղս ժամանեցին և ընդունուեցան մեծ հանդիսաւորութեամբ։ Ընդունելութեան կայսրի, բոլոր պրինցների, կայսերական կանցլերի, բոլոր մինիստրների և գեներալիտէտի կողմից։ Տօնական ձևով զարդարուն փողոցները լցուած էին խուռն ժողովուրդով, որ ողջունում էր թագաւորին։

(Երեկ. հետ. չորրորդ երեսում)

ՔՐՈՆԻԿՈՆ

Վերջին մի քանի պաստով ստացուած թէ մայրաքաղաքի և թէ գաւառական բոլոր ռուս թերթերը լիքն են հանդուգնալ Սալտըկովի (Շչեդրինի) յիշատակին նուիրուած յօդուածներով։ Զկայ մի թերթ, նոյն իսկ հակառակ կուսակցութեան թերթերը, որ վերին աստիճանի համակրական, ջերմ յօդուածներ չնուիրէին Ռուսիայի ամենամեծ և ամենասիրելի հեղինակին — ճշմարտութեան, արդարութեան, իրաւունքի համար նուիրուած անձնազոհ գրագէտի յիշատակին։ Ողբում են այդ մեծ գրողի մահը, գրողի՝ որ մինչև իւր վերջին շունչը, նոյն իսկ մահուան անկողնում անգամ, մտածում էր հասարակական խնդիրների, հասարակութեան թոյլ կողմերի վրայ։ Շչեդրինը—մի ամբողջ աշխարհ էր։ Շչեդրինը—մի ամբողջ բանակ էր։ Նա իւր ասպարէզ մտած օրից մինչև մահուան րոպէն միշտ հաւատարիմ մնաց իւր դրօշակին, որի վրայ գրած էր ազատախոհութիւն, արդարութիւն, իրաւունք, մարդասիրութիւն։ Շչեդրինը մինչև իւր մահուան րոպէն իւր անձին օրինակով քաջալերել, ոգևորել է թոյլերին և երբէք յաւատացած չէ անաջող հանգամանքներում, երբ բոլորը իւր չորս կողմում յուսահատութեան մատնուելու մօտ էին լինում։

Հազիւ թէ Ռուսիայում եղած լինի մի գրող, որ այնքան բազմակողմանի կերպով չօշափած լինի հասարակութեան բոլոր խաւերի համարեա բոլոր կողմնրը—մերկացնելով սուտ թիւնը, վատութիւնը, խարդախութիւնները։

Շչեդրինը մի հսկայ էր ռուս կեանքի և գրականութեան մէջ, որի նմանը հազիւ են դարերը ծնում։

Պետերբուրգի և առհասարակ բոլոր Ռուսիայի հասարակութիւնը իւր խոր վիշտը և ցաւը յայտնել է բազմաթիւ հեռագիրներով, նամակներով, պատգամաւորներով, պսակներով և նրա անուանը սուիպէնդիա հաստատելու համար սկսած հանգանակութիւններով։

—

Նորին Մեծութիւն պարսից Շահը Թիֆլիս եղած միջոցին այցելից ի միջի այլոց և ս. Նունէի ուսումնարանը, որից, ինչպէս երևում է, գոհ է մնացել։ Նորին Մեծութիւնն իւր գոհունակութիւնը յայտնել է նուիրելով յիշեալ ուսումնարանի հոգաբարձուհի Ն. Բ. Շերեմետեւային չոզնակով զարդարուն վիրոյզ մի մատանի, իսկ ուսումնարանի կառավարչուհի Վ. Ա. Տատիչչևային՝ մի թանկագին չալ։

—

Մեզ գրում են։—Թիֆլիսի հայ արհեստաւորների և առևտրականների մէջ սովորութիւն կայ, որ ամեն մի համբառնութիւն Զատկից յետոյ մինչև Համբարձումը, երկուշաբթի օրերը հերթով տօնում են և մասաղ բաժանում աղքատներին և միասին գնում են քէֆ անելու։ Թիֆլիսի հաճագործները (մեբէչչիկ) թ-

Թում են դպրոցի առաջադիմութեան դէմ խարդաւանքներ միայն նրա համար, որ առիթ ունենան պարծենալու՝ թէ մենք կարողացանք քանդել այն՝ ինչ որ ուրիշները կարնում էին չկարնել...։

Ողբան և քաղցր էր ինձ՝ երկար լսել իմ սիրած երիտասարդին, այսու ամենայնիւ նա այդ հաճոյքը ինձ չպատճառեց։ Հազիւ մի ժամ մնաց մեզ մօտ և այդ ժամը մի քանի րոպէի պէս անցաւ ինձ համար։

Ներողութիւն խնդրելով՝ որ աւելի ուշանալ չէ կարող, նա ողջունեց մեզ և հեռացաւ, խոստանալով դարձեալ այցելել մեզ եթէ ժամանակ կը գտնէ։

Բայց այդ ժամանակը նա չատ ուշ գտաւ կամ, զուցէ, չկամեցաւ չատ զբաղնել։

Ես չատ սպասեցի նրան։ Անցաւ առաջին կիրակին, անցաւ երկրորդը, անցաւ երրորդը։ Եւ այդ բոլոր ժամանակում ես մի անգամ միայն պատահեցի նրան եկեղեցում, ուր նա զարձեալ սիրով, զարձեալ քաղցր ժպիտով ողջունեց ինձ և հեռացաւ։

Դրանից յետոյ իմ սիրութիւնը օր ըստ օրէ սկսաւ աւելանալ. գնալով աւելի անձնատուր եղայ գաղտնի մտածմունքներին. ընտանեկան գործերով էլ չէի կարողանում պարապել և գրեթէ բոլոր օրը հոգով և մարմնով հիւանդ էի։

Մայրս, որ, ինչպէս յետոյ իմացայ, վաղուց արդէն հետևելիս է եղել իմ քայլերին, մի օր կանչեց ինձ իւր մօտ և ասաց.

—Սիրելի Աննա, հինգ ամիս աւելի է ինչ ես մի տարօրինակ փոփոխու-

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

(Վախտանգ Ալ)

...ասում էր իր բարեսիրտ հյուրընկալին՝ ծերունի Ավետիսին, որ նրան հրավիրել էր իր տունը գիշերելու։

Ավետիսը մի հարուստ գյուղացի էր։ Նրա տունը գյուղի ամենամեծ տներից մեկն էր։ Ավետիսը ուներ երեք որդի և երեք հարս։ Նրա որդիները ամենքն էլ ամուսնացած էին և ապրում էին հոր տան մեջ։ Ավետիսի տունը միշտ լիքը լինում էր հյուրերով։ Ավետիսը սիրում էր հյուրասեր լինել։ Նա ասում էր, որ հյուրերը աստծուց են գալիս

սուն օսմ. ոսկիի գումար մը նուիրել, առ նպատակաւ որ կալուած մը գնուի և նորա հասոյթին կէսը Ս. Թարգմանչաց կեդրոնական ուսումնարանի և կէսը Ս. Լուսաւորիչ Թաղի վարժարանին յատկացուի։

—Մեր ակնկալութեանց նայելով, ելմտական նախարարութիւնը Տ. Յարութիւն Ս. Պաղտիքեանի յանձնած է 20,000 ոսկւոյ Հաւատչէ մը, զոր ամբողջովին պիտի աւանդայ Սրուանդեան կառավարչական մնաւուկին ի հաշիւ Սրուանդեան պարտուց 5,000 ոսկւոյ գումար մը արդէն Մալիէէն ուղղակի վճարուած էր յետուանդամտուն, և 10,000 ոսկի Պաֆֆէ մնացած է, որ պիտի վճարուի Վանքին՝ քանի որ դանձուի պատառնելէն կ Պոլսոյ Հայոցմէ հաւաքեալ դրամէք այս հաշուէ դուրս կեն։ Այս կերպիւ Վանքին պարտուց մնծագոյն մասը կը վճարուի, և մի և նոյն փութիանի հոգածութեան չնորհիւ, յուսալի է որ Տ. Յարութիւն Ս. Պաղտիքեան յաջողի ամբողջովին մաքրել այս մնծ և ծանր հաշիւ։

—Յայտ ապրիլի լուած ենք թէ Թէհրանու Ռուսիոնասիրայց Ընկերութիւնը ձեռնարկած է տպարան մը հաստատել և մտադիր է ազգային լրաթերթ մը հրատարակել։ Այդ բարենպատակ և արդիւնաւոր Ընկերութիւնը կը կառավարէ արդէն Թէհրանայ մէջ ընթերցարան մը, թատրոն մը և երկուս հոյակապ և բարեկարգ վարժարան մը։ Ի բոլոր սրտէ կը մաղթենք որ յաջողին նաև տպարանի և լրագրոյ ձեռնարկութեան մէջ, ինչպէս յաջողած են առաջինները մէջ, և բարդ ունենանք ընդհանուպ կարդալու իրենց լուսաւորիչ թերթերը։

—Մարտի 17-ին, 18-ին և 20-ին, գրեթէ ամէն անգամ՝ ժամ 6½ի միջոցները, երկրաչարժի բուռն ցնցումներ զգացուցան Եգեսիս։

—Անցեալ չարթ-ու (Եգեսիս) մնուած հայ-բողոքական պատանւոյ մը գնկազմութեան բնաւ աշխատութիւնք բարեբաղդաբար քիչ մ՚ուշացած ըլլալով, մնուած համարուածն, որոյ թաղման ամէն պատրաստութիւնք տեսնուած էին, կնոջի կենդանութեան նշան ցոյց տալ և այժմ կ՚ապրի։

—

ՌՈՒՍԻԱՑԻ ԹԵՐԹԵՐՈՒՄ ԿԱՐԴՈՒՄ ԵՆՔ

—Պետերբուրգում կազմուած էր մի յանձնաժողով, որին յանձնուած էր կլասիկական գիմնազիաներում կլասիկական լեզուի դասախօսութեան խնդիրը քննելու գործը։ Յանձնաժողովը որոշել է գիմնազիանի երկու բարձր դասարաններում հին լեզուներից գրաւոր պարապմունքը վերջացնել և աւելցնել կլասիկների հնդիմաբանական թարգմանութեամբ պարապելու աշխատութիւնները։

—Պետական խորհրդում մօտիկ ժամանակներս չուսում քննութեան է մի առանձին յանձնաժողովի մշակած կանոնագիրը, որ նպատակ ունի գիմնազիական-բժշկական ճեմարանն յարմարեցնել համալսարանական նոր կանոնադրութեան։

—Պետական կազմածների մինիստրութիւնը նոյնիսկ գործ. մինիստրութեան հետ համաձայնութիւն կայացնելով, կազմել է գիւղատնտեսական վճռագործ ընդհանուր ժողովի կանոնագիր, որը մօտիկ ժամանակներս պիտի վերջնական հաստատուի։

—Հինց որ ուսուց հնչակաւոր և տազանդաւոր պրոֆ. Շչէգլէեվի մահուան լուրը տարածուեց քիչ չէ, մայրաքաղաքի զանազան չրջաններում սկսան նրա անունով տիպլենդիա հաստատելու համար նուիրատուութիւններ հաւաքել։ Ի միջի այլոց Պետերբուրգի հրդեհալ հատատութեանների մէջ հաւաքել են 550 րուբլի, իսկ գրագէտների կազմած ճաշի միջոցին հաւաքել են 800 րուբլի նոյն նպատակով։

—

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ ԵՒ ԻՒՐ ԹԵՐԹԸ

—

Իւրաքանչիւր մարդ ունի իւր մտածելու, զգալու, ուրախանալու և տխրելու կերպը, ինչպէս և իւր մլաքը, իւր զգայութիւնը, իւր ուրախութիւնը և տխրութիւնը արտայայտելու եղանակը՝ խօսքով և բառերով։ Իւրաքանչիւր մարդ ունի և վարուելու, զուարճանալու և վիճելու հանգոյց։ Այդպիսով իւրաքանչիւր մարդ որոշում է տարբերուում է միւսներից։ Ինչ որ մարդկանց համար ենք ասում, նոյնը կարելի է ասել և թերթերի վերաբերութեամբ։

Արդ տասնեակ տարիների փորձերով յայտնի և անհերքելի փաստ է, որ Գրիգոր Արծրունու իւր թերթով ամենայնչին վէճի առիթ իսկ իւր հակառակորդի զէմ բացի փողոցային հայհոյանքից, սուտ լուրերից և զրպարտութիւնից ուրիշ զէնք չունի։

Յետոտենք և անուանարկենք հակառակորդին—ահա Գրիգոր Արծրունու և իւր թերթի նշանաբանը։

Ընթերցողը կարող է հասկանալ, թէ ինչ պէտք է լինի այդ խեղճ թերթի դրութիւնը և նրա կատաղութիւնը՝ պարտութեան ժամանակ։

Ի հարկէ այնքան էլ դիւրութեամբ մարսելու բան չէ այն չարաչար պարտութիւնը, որ կրեց «Մշակ»-ը իւր խմբակով հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան ընդհանուր ժողովներում։ Երկար ամիսներ փողոցներում աչխատել, ձիւը թափել, ամէն հոնարներ բանեցնել առանց սեռի խտրութեան, որպէս զի «Մշակ»-ը ապրանայ այդ ընկերութեան, և՝ յանկարծ չարդ ու փշուր լինել «Նոր-Դար»-իցդողալ «Նոր-Դար»-ի այժը իւր մէջքի վրայ, զա մի փոքր ծանր է, խոստովանում ենք։

Կատաղած այդ թերթը իւր «ամէն կողմից ընտիր և ազնիւ» այժը առաջ է քշել «Նոր-Դար»-ի դէմ։ Հարկաւոր է միթէ ասել ընթերցողին, որ հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան ընդհանուր ժողովների և ընտրութիւնների առիթ նրա գրածներն ծայրէ ի ծայր սուտ լուսներ, զրպարտութիւններ են և այսուհետև էլ սուտ լուսներ պիտի լինեն։ Այդ գրուածքների մէջ յանդուգն սուտ լուսները, անխիղճ և նենգամիտ զրպարտութիւնները մրցում են երկչոտութեան և փոքրոգութեան հետ։ Վերջին ընդհանուր ժողովին մասնակցողները պիտի ասեն, որ ժողովի նախագահը ոչ «Նոր-Դար»-ի մարդն էր և ոչ էլ «Արձագանքի», սրանից զատ օպտին կողմնապահութիւն ապասել նախագահից կարելի չէր։ Այդ ինչու «Մշակը» մէկ խօսքով անգամ չէ յայտնում նախագահի դէմ. չէ որ նախագահը մի ժամ չարունակ «Մշակներ»-ի ձայնը կտրեցնելով էր զբաղած և ժողովը բուռն ցոյցերով նախագահի հետ միասին լռութեան դատապարտից զրանից։ Չէ որ նախագահը խստիւ յանդիմանից զրանց և խօսելու իրաւունքից զրկելով թոյլ տուից զրանց խօսելու այնտեղ, որտեղ ազատ միջոց ունէին։ Ինչու են լռում...։

Բայց պէտք է կեղծել, պէտք է լռել, պէտք է բոլորին չոյել, որպէս զի կարելի լինի յարձակուել «Նոր-Դար»-ի դէմ, կարելի լինի նախագահի ջիղերը հանել «Նոր-Դար»-իցւ և զրա համար «Մշակը» իւր «ընտիր ընթերցող» բացատրեալ և բացորոշ մեզադրում է «Նոր-Դար»-ին և նրա խմբագրին, որ Զէյթունցիների վրդովը կրկնել, մաքրապարթևել է։ Արդէն իւր արբանեակները միւնոյնը ասել էին պատգամներով 1887 թուին։ Ի հարկէ նրանէ այդ ձչմարիտ լինէր, այն ժամանակ կառավարել խայտառակութիւն կը լինէր և մենք պէտք է որ մեր գլուխը խոնարհեցնինք և ամէն անարդանք յօժարութեամբ կրեինք։ Բայց որ դա նենգամիտ, անամօթ և անխիղճ զրպարտութիւն է, — այդ հասատ է։ Ինչպէս հաստատ է, որ «Մշակը» և իւր արբանեակները այդպիսի անխիղճ զրպարտութիւնների դիմումն գործում որ հակառակորդներին անուանարկելու, արատաւորելու համար։

Զկամենալով լրագրական նեղ, անճոռնի և անվայել վիճաբանութիւնների մէջ մանել և լսելով մեր բարեկամների, լուրջ և հասկացող մարդկանց խորհուրդը, արհամարհել ենք մեզ զէմ անճոռնի և անվայել յարձակումները և միշտ լռութիւն ենք պահպանել և այն ժամանակ, երբ «Մշակը» «Արձագանքից» նեղն ընկած՝ իւր սովորական զէնքով նրա զէմ կռուելիս կողմնակի և մեր բակը քարեր է ձգել։ Բայց ինչպէս երեսում է, մեր համառութիւնը, մեր լռութիւնը նրան աւելի համարձակութիւն, աւելի յանդգնութիւն է ներշնչել։

Հասկանալի է, որ Սիմէոն Հախումեանների պէս հակառակորդները մեզ համար պարծանք չեն. մեր հասարակական կեանքը արդէն այնպիսի ընթացք է ստացել, որ ամբիոններին էլ պէտք է հանդիսանք մեր ճանապարհի վրայ։ Այդ պարագրութեան դէպքում աւելի լաւ է, որ Հախումեանները մեզ զէմ լինեն կանգնած քան թէ մեզ հետ Թողնելով Գրիգոր Արծրունուն լուսի վայելել Հախումեանների «քաղցր և պատուաբեր» ընկերութեան արտօնութիւնը, ըսպասում ենք «Մշակից», եթէ միայն նա քաջութիւն ունի, այսուհետև իւր մասին մի-որ մնք հրատարակելու ենք, արատապէ, մեզ զէմ իւր գրածներն «Նոր-Դար»-ի մէջ հրատարակելու պայմանով։ Երկու թերթի ընթերցողներն էլ այդպիսով կլսեանան, թէ երկու թերթերն մրնանց զէմ ինչ են ասում. և կարող են ճշմարտութիւնն այդպիսով աւելի դիւրութեամբ գտնել։

—

ՄՈՒՍԱ-ԲԷՅ

—

«Նոր-Դար»-ի ստացած հետապիրնեբից արդէն ընթերցողները գիտեն, որ Մուշի մօտերքը Մուսա-բէյ անունով մի աւազակ մի երկու ոսկանութիւններ է գործել։ Այդ լուրը թէ հետապիրնեբով և թղթակցութիւններով տարածուեցան աչխարհքիս չորս կողմը և Ղանաւոր թերթեր այդ մասին յօդուածներ գրեցին. իսկ անգլիական պատգամաւորների ժողովներում հարցեր եղան այդ առթիւ, որոնց թէ Անգլիայի արտաքին գործերի մինիստրի օգնական Ֆէրգիւսոնը և թէ ինքը մինիստր-նախագահ Գլադստոն Սալսբերիին տեղեկութիւններ տուին Մշեցիներից մեր հասցած տեղեկութիւններից երեւում է, որ Մուսա-բէյը եղել է միւդիր (դատաւոր) մի հայ գիւղում նոյն իսկ հայերի ընտրելով և ցանկութեամբ. բայց ժամանակի ընթացքում Մուսա-բէյին լաւ կողմից չճանաչելով, նոյն հայերը նրան հրաժարեցնում են իւր պաշտօնից, կամ հրաժարեցնելու պատճառ են դառնում։ Ահա այդ հանգամանքը գայրացնում է Մուսա-բէյին, որ իւր հետ մի քանի ձիաւորներ վեր առած, սկսում է աւազակութեամբ պարապել և իւր հակառակորդներից վրէժխնդիր լինել։

«Times»-ի Կ. Պօլսի թղթակիցը խօսելով Մուսա-բէյի մասին, հաղորդում է, որ Սուլթանը խստիւ հրամայել է արձակել վախճատական աւազակին ձերբակալելու, նրա հետ էլ նրա խմբին, այն նեղութիւնների համար, որ նրանք պատճառել են Մուշի չրջակայքի հայերին։

*

«Հիւսիսային գործակալութիւնը» հետագրում է մայիսի 1-ին. «Լօրդների պալատի այսօրուայ նիստում մարքիզ Սալսբերիին հաղորդեց, որ կառավարութիւնը ոչինչ անդնկութիւն չունի Թիւրքա-Հայաստանում գործած բռնաբարութիւնների մասին «Թիւրքական դեսպանը,—աւելացրեց մինիստր-նախագահը, —որքան գործը վերաբերում է Օսմանեան կառավարութեան պատասխանատուութեան, այդ լուրերին չէ հաւատում, թէև ներկայում է, որ Պարակատանից թափառաչրջիկներ խուժած լինին Հայաստան։ Թիւրքիան խորը վշտացած է այդ մասին, բայց պատժական միջոցների դիմել չէ կարող, որովհետև թափառականներն այդպիսի միջոցին անմիջապէս անցնում են Պարսից սահմանը»։ Ի վերջոյ մարքիզ Սալսբիւրին միտք յայտնեց, որ Թիւրքիան ըղձալին կանխամտած է երկիրը արդարատութեան սկզբունքով կառավարել և այնտեղ կարգը պահպանել։ Անգլիան իւր բոլոր ազդեցութիւնը կը գործածէ, որ Թիւրքիայի այդպիսի ցանկութիւնն իրագործուի։

*

Թիւրքա-Հայաստանում գործող առաջակների գործած չարագործութիւնների մասին Կ. Պօլսից «Correspondence de L՚ Est»-ին գրում են հետևեալը. «Տիգրիս հայ հասարակութիւնը մեծապէս յուզուած է Մուշի չրջանում քուրդերի գործած չարիքների լուրերն առնելով։ Այդ չրջանում բարբարոսութիւններ է գործում մի քուրդ աւազակապետ, որի մասին բաղմիցս հաղորդուած է «Levant Herald»-ին։ Օսմանեան վարչական անձերը պնդում են, թէ այդ աւազակին հալածում են և ուզում են կալանաւորել, սակայն աւազակը ոչինչ արգելք չունի Բիթլիսում խաղաղ ձմեռը անցկացնելու, որից յետոյ նա վերսկսում իւր յարձակումները։ Քուրդական այդ աւազանին՝ Մուսա-բէյը, նոյնպիսի չարագործի որդի է, ինչպէս է ինքը։ Սըբանից երեսուն տարի առաջ, Մուսա-բէյի հայրն այրից մի գիւղ, որի միջոցին 300 հոգի կրակին զոհ գնացին։ Մօտերքս հայոց Արքավանք գիւղի տանուտէրը Օհանէսը, որ անցեալ տարի Մուսա-բէյի մասին կառավարութեան պատասխանատուութեան, այդ լուրերին չէ հաւատում, թէև ներկայում է, որ Պարակատանից թափառաչրջիկներ խուժած լինին Հայաստան։ Թիւրքիան խորը վշտացած է այդ մասին, բայց պատժական միջոցների դիմել չէ կարող, որովհետև թափառականներն այդպիսի միջոցին անմիջապէս անցնում են Պարսից սահմանը»։ Ի վերջոյ մարքիզ Սալսբիւրին միտք յայտնեց, որ Թիւրքիան ըղձալին կանխամտած է երկիրը արդարատութեան սկզբունքով կառավարել և այնտեղ կարգը պահպանել։ Անգլիան իւր բոլոր ազդեցութիւնը կը գործածէ, որ Թիւրքիայի այդպիսի ցանկութիւնն իրագործուի։

*

Թիւրքա-Հայաստանում գործող առաջակների գործած չարագործութիւնների մասին Կ. Պօլսից «Correspondence de L՚ Est»-ին գրում են հետևեալը. «Տիգրիս հայ հասարակութիւնը մեծապէս յուզուած է Մուշի չրջանում քուրդերի գործած չարիքների լուրերն առնելով։ Այդ չրջանում բարբարոսութիւններ է գործում մի քուրդ աւազակապետ, որի մասին բաղմիցս հաղորդուած է «Levant Herald»-ին։ Օսմանեան վարչական անձերը պնդում են, թէ այդ աւազակին հալածում են և ուզում են կալանաւորել, սակայն աւազակը ոչինչ արգելք չունի Բիթլիսում խաղաղ ձմեռը անցկացնելու, որից յետոյ նա վերսկսում իւր յարձակումները։ Քուրդական այդ աւազանին՝ Մուսա-բէյը, նոյնպիսի չարագործի որդի է, ինչպէս է ինքը։ Սըբանից երեսուն տարի առաջ, Մուսա-բէյի հայրն այրից մի գիւղ, որի միջոցին 300 հոգի կրակին զոհ գնացին։ Մօտերքս հայոց Արքավանք գիւղի տանուտէրը Օհանէսը, որ անցեալ տարի Մուսա-բէյի մասին կառավարութեան

ջանք ու ճգերին, լրացնելով իւր նախընթաց ժողովի արած պաշտօնակատար մարմինների ընտրութիւնը, ինձ ևս կոչեց ծառայութեան՝ ընտրելով վարչութեան անդամ և գրասէր։ Թէև իմ պաշտօնական գործերս արդէն բաւական ծանր էին ընդունելու համար մի այդպիսի պատասխանատու պաշտօն և ուզում էի այդ պաշտօնից հրաժարուել՝ իմ չնորհակալիքս յայտնելով ընդհանուր ժողովի ինձ ցոյց տուած պատուի և վստահութեան համար, բայց ծանօթ և անծանօթ բարեկամներս խնդիրներն ջիջանելով, ընդունեցի այդ պաշտօնը։

Սառանձնելով այդ պատասխանատու պաշտօնը, ես առաջնորդուած եմ եղել միմիայն ընկերութեան օգուտը և ամեն մի անհատի դէպի իւր հասարակութիւնն ունեցած բարոյական պարտաւորութիւնն ի նկատի ունենալով։ Սակայն իմ ընտրութիւնից մօտ մի ամիս յետոյ, երբ երբորդ անգամ գումարուեցաւ միացեալ ընկերութեան ընդհանուր ժողովը, որի մասին մի քանի ճչգրիտ գծերով ընթերցող հասարակութեան գաղափար էր տուել «Նոր-Դար»-ը № 71-ի մէջ զետեղուած «Հայ. Գր. Հր. Ընկ. ընդհանուր ժողովը» խորագիրը կրող յօդուածով, կանխօրէն որոշելով իւր քննելու խնդիրներն և նրանց կարգը, ի միջի այլոց յարոյց և վարչութեան անդամներից քարտուղարին և գրասէրն վարձատրելու խնդիրը՝ պ. Աւետիք Արտասխանեանցի նախաձեռնութեամբ, որ հաստատութեան գատ ընկերութեան համարեա բոլոր անդամների կողմից։ Հենց այդ ժողովի միջոցին ուզում էի հրապարակաւ հրաժարուել ոտճկից, որովհետև երբէք ակնկալու չէի եղել և մանաւանդ որ նոր պաշտօնս էլ գեռ բոլորովին ծանօթ չէր ինձ, սակայն մի կողմից համոզուելով բարեկամներիս առաջադրած փաստերից՝ թէ ոտճիկը միայն գրասէրի համար չէ, այլ և քարտուղարի. իսկ քարտուղարութիւնն անհամեմատ ծանր պաշտօն լինելով և շատ ժամանակի էլ կարօտ, անհրաժեշտ է, որ դրա համար ոտճիկ որոշուի, և միւս կողմից ի նկատի ունենալով, որ լաւ էր, որ մի անգամ ընդ միչտ աչխատանքի վարձատրութեան սկզբունքն ընդունուէր, մանաւանդ որ, յետոյ էլ կարող էի հրաժարուել ոտճիկ ստանալուց,—լռեցի և ժողովը որոշեց։

Իմ որոշման մասին արդէն պատիւ եմ ունեցել յայտնելու ընկերութեան վարչութեան պ. նախագահին։

«Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան» վարչութեան անդամ—գրասէր՝

Մեսրոպ Պապկան Դանագիոզ.

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

ԴԱՂԱՒԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ՖՐԱՆՍԻԱ.—«Nordd. Allg. Zeit.» թերթը, որ իշ՚ Բիսմարկի օրգանն է, Պարիզի ցուցահանդէսի մասին հետևեալ ձևով է խօսում. «Այդ ցուցահանդէսը երկրորդ կարգ է մղում ոչ միայն Բուլանժէի խնդիրը, այլ և բոլոր քաղաքական խնդիրները։ Օտարերկրացիների տեսակէտից մի առանձին միտք չի ունենալ Ֆրանսիան. Ներկայումս արտաքսմամբ աչխատող Ֆրանսիային աւելի համակրութեամբ են վերաբերում, քան թէ քաղաքականութեամբ պարապող Ֆրանսիային։ Ոչոք Ֆրանսիացիներից չի պահանջիլ, որ ցուցահանդէսը, բացի իւր առաջացրած բաղմաթիւ օգուտներից, կարող է ծառայել նաև քաղաքական նպատակների համար, որովհետև դա կը նպաստէ Ֆրանսիական կառավարութեան վարկի զօրանալուն։

«Անհրաժեշտ է նկատել, որ երկրի քաղաքական մեծութիւնը չատ կողմերից սերտ կապ ունի նրա առևտրական

և արդիւնագործական զարգացման հետ»։

—Բերլինի «National Zeitung»-ը համեմատում է Միացեալ-Նահանգների հարիւրամեակը Ֆրանսիական հարիւրամեակի հետ։ Լրագիրը նկատում է, որ անգրաստանդեան մեծ հասարակապետութեան մէջ յեղափոխութիւնը վերջացել է սրանից հարիւր տարի առաջ, մինչդեռ Ֆրանսիայում մինչև օրս էլ չարունակւում է։ Ի վերջոյ «National Zeit.»-ը ասում է. «Ձնկատած ժամանակ է, որ մեր հարևան պետութիւնն էլ անէր այն, ինչ որ Միացեալ-Նահանգներն արէն 1789 թ. ապրիլի 30-ին, այսինքն, վերջացնէ իւր մէջից յեղափոխութիւնը։ Հարիւրամեակը բաւական երկար ժամանակ է նոյն իսկ յեղափոխութեան համար»։

ԱՆԳԼԻԱ.—Սուվօրովի կղզիներ անունով կղզիների խումբը վերջին ժամանակներս պաշտօնական կերպով միացրած է Անգլիայի հետ, այդ մասին արդէն պատգամաւորների ժողովում լորդ Համիլտոնը յայտարարեց։ Այդ կղզիները գտնւում են Խաղաղական ովկիանոսում 13° հիւսիսային լայնութեան տակ. այդ կղզիները գտել է առաջ լէյտենանտ Կոթերոն, բայց մինչև այժմ գետ ոչ մի պետութիւն պաշտօնապէս չէր տիրել նրան։ Այդ—փոքրիկ և անբնակ կղզիներ են։ Անգլիան իրեն յատուկ գործնականութեամբ չառաջեց տիրելու նրանց, որովհետև դրանք առանձին նշանակութիւն ունէին՝ որպէս քարածխային կայարան Խաղաղ ովկիանոսի մէջ։

ԻՏԱԼԻԱ.—Իտալական կառավարութիւնը Հաբէչստանի Նէգուս Մենելիքի հետ դաշն է կնքել Կերէնի բարձրաւանդակը և Ամարային տիրանալու մասին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Պարիզի ցուցահանդէսում մեքենաների բաժինը ներկայացնող գալերէյը երկրիս երեսին եղած փակ չինութիւններից ամենից մեծն է։ Նրա լայնքը 115 մետր էր, խորութիւնը 45 մետր։ Կամարների լայնութիւնը 111 մետր է։

*** Մադրիդում հրատարակւում է մի թերթ առանց խմբագրի։ Խմբագրութիւնը կազմուած էր մի խումբ աչքաբաց լրաբերներից, որոնք ամբողջ օրը քաղաքում ամէն տեսակ տեղեկութիւններ են հաւաքում։ Նրանք իրենց լուրերը, նկատողութիւնները բերում ձգում են ապարանում մի արկղի մէջ, որտեղից աւագ-գրաչարը հանելով չարում է. թերթը հրատարակւում է օրը երեքին մի, երբեմն երկու, երեք և աւելի անգամ, նայելով, թէ երբ է լցւում համարը նեղ։

*** Ամերիկայի Խնդիանա նահանգում մի գերմանացի օգնական, Շորէյկ անունով, մահացաւ իր հնոջ աչքերի առաջ, որից կինը խելագարուեց։ Օգնապարիկը բարձրանալով 1200 մետր բարձր, յանկարծ տրաքւում է, Շորէյկը ընկնում է երկրի վրայ և տեղն ու տեղը մահանում։

*** Չիկագոյում հրատարակուող «Chicago Tribune» թերթը, որ Միացեալ-Նահանգներում ամենատարածուած թերթերից մինն է, մի սովնական յայտարարութիւնն ամբողջ տարուայ ընթացքում հրատարակելու համար առանում է 35,000 դոլար (մօտ 200,000 րուբլի), «New-Iork-Herald»-ը մի սովնական յայտարարութեան համար առանում է առաջին երեսում 83,000 դոլար, իսկ լրագրի մէջում՝ 49,000 դոլար։ «New-Iork Tribune»-ի մէջ յայտարարութիւնները մի քանի չափ ունին, որոնցից ամենաէժանը 28,000 դոլար է, իսկ ամենաթանկը—114,000 դոլար։ Սակայն, հնայելով այդ գներին, ամերիկական թերթերը միշտ լիքն են լինում յայտարարութիւններով։

*** Լիսնում լարախաղների մի խումբ, 21 երևխայ է գողացել, որոնց ամենախիստ հսկողութեամբ պահելիս են եղել։ Մի անգամ այդեղուններից մինը լսում է թոյլ հառաչի ձայն և յայտնում է ոստիկանութեան։ Վերջինս գալով, խուզարկում է և գտնում 21 երևխայ՝ 2—6 տարեկան, որոնցից 13-ը կարողացել են յայտնել իրենց ով և ում որդին լինելը, իսկ մնացածներին ուղարկել են մանկանոց։ Լարախաղացների կառավարիչը և կինը ձերբակալուած են։

*** Ֆրանսիական 1789 թուականի յեղափոխութեան հարիւրամեակի յիշատակին կառուցելիք արձանի համար երկու միլիոն ֆրանկ է նշանակուած։ Արձանի համար մրցանակ է նշանակուած 150,000 րուբլի։

*** Պարիզի ցուցահանդէսի բացման օրը, Պարիզի քաղաքային վարչութիւնը 100,000 ֆրանկ նշանակել է Ֆրանսիայի մայրաքաղաքի աղքատներին բաժանելու համար։

*** Լօնդոնի «Central News»-ը հաղորդում է, որ մօտերքս Ամերիկայի Կանզաս նահանգում ցիկլօնը (զօրեղ փոթորիկ) քանդել է Սանֆիօրդ քաղաքի բոլոր շէնքերը, որի միջոցին երեք հոգի սպանուել և 300 հոգի ծանր վիրաւորուել են։

*** Շատ անգամ մադագաթի վրայից թանաքը խառնացած է լինում. որպէս զի թանաքը իւր գոյնն ստանայ, պէտք է խառնացած տեղը թեթևակի ածխային ամիճնիկ քսել։ Այս միջոցն արդէն փորձուած է և խիստ աջող արդիւնքներ է ցոյց տուել։

*** Տրանսիլվանիայում ասղային գնահոց գանձ են գտել, որ կազմուած է XIII դարի ոսկէ դրամներով լիքը ոսկէ սկուտեղներից և սափորներից։ Դրանուած գանձը 2 միլիոն ֆրանկ են գնահատում։ Այդ գանձը գտել են նոյն տեղերքի մօտերքում, որտեղից գտել են 1794 թուին Աատրիայի ծածկած գանձը, որ այժմ պահւում է Աւստրիայի կայսերական տան մատառոյ մուզէումում։

ԵՐԿՈՑԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԵՆԻՐ

(«Հիւսիսային գործակալութիւն»)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մայիս. — «Граждан.»-ը հաղորդում է, որ Թագաժառանգն երէկ տաւջին անգամ պետական խորհուրդ եկաւ և խորհրդի բարեմաղթութիւններից յետոյ, իւր տեղը բռնեց։

«Нов.»-ն հաղորդում է, որ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան խորհրդի տեխնիկական բաժինը մտադրութիւն կայ վարչականից բաժանելու։ Տեխնիկական բաժնի նախագահը նշանակւում է Կերբէձը, իսկ վարչական մասի նախագահը գեներալ Սերեբրիակովը։ Երկաթուղային խորհուրդում կը նախագահէ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի օգնական Եւրեինովը։ Բացի այդ տեխնիկական մասը կազմակերպւում է և լրացւում է նոր անդամներով, ինչպէս ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան, նոյնպէս և ուրիշ վարչութիւններից։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

«Նոր-Դար»-է Օբայոյց.

1889 Թ. Ք.	Մայիս 31 օր.	ՏՅԶԱ. Հայի. Թ.

11—Ե. ակ. լդ օր յինանց.—Լ. 23. Ն. Տ. մայիսի 23. մարերի 4.

12—Ուր. բԹ. լե օր յինանց.—Լ. 24. Ն. Տ. մայիս 24. մարերի 5.

13—Եր. բկ. լե օր յինանց. լ. 25. Ն. Տ. մայիս 24. մարերի 6.

14 —Կիր. գԹ. լդ օր յինանց,—Լ. 26. Ն. Տ. մայիս 26. մարերի 7. Յն. Մահ Ի. Մարիա Պաւլովնայի.

15 —Բ. գկ. լէ օր յինանց.—Լ. 27. Ն. Տ. մայիս 27. մարերի 8. Ռուսաց Կայսրի և Կայսրուհու թագադրութեան օրը.

16 —Գ. գՀ. լը օր յինանց.—Լ. 28 Ն. Տ. մայիս 28. մարերի 9. Աբ. ծագ. 4 ժ. 31 վ. մուտք 7 ժ. 23 վ.

17 —Չ. գկ. լԹ օր յինանց.—Լ. 29, Ն. Տ. մայիս 29 մարերի 10.

18 —Ե. ակ. խ. օր յինանց.—Լ. 30. Ն. Տ. մայիս 30. մարերի 11.—Համբարձում.—Մե. լս. փոփոխական հանգամ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երեք եկեղեցին «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաքուում, ալօտայլեն. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մար. գն. 3 ժ. 21 վ. ց.
Ազստափա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.

Գալիս է

Բաքուից, ալօտ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, ,, 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Ազստափայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

CORSETS
LEOTY
adoptés
parle
High-Life parisien
8, Place de la
Madeleine, Paris.
(M). 21— 8

SANTAL DE MIDY
Pharmacien de 1-re classe, à PARIS
permis en Russie
ՍԱՆՏԱԼ ԴԸ-ՄԻԴԻ
Պարիզի առաջնակարգ դեղագործ Պ. Միդիեի Ռուսաստանում ընդունուած.
Ծախւում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։
(M.) և 30—30

VIN
DE PEPTONE PEPSIQUE
DE
CNAPOTEAUT
pharmacien de 1-re classe
A PARIS
AUTORISÉ EN RUSSIE
Պարիզի առաջնակարգ դեղագործ
Պ. Շապօտօի հնարած
ՎԻՆ ԴԸ-ՊԷՊՏՕՆ ՊԷՊՍԻՔ
անուանեալ գինին
Ռուսաստանում ընդունուած.
Առանց ստամոքսը հոգնեցնելու անուցանել հիւանդ կամ ապաքինեալ անձերը.
Ահա այս դժուարին խնդիրն է որ լուծեց վերոյիշեալ համեմ գինին։ Այս դեղի յատկութիւնն է կազդուրել և սնուցանել ստամոքսի, լեարդի, աղիքների զանազան ախտերի, ինչպէս նաև դժուարամարսութեան, անախորժութեան, անարիւնութեան ենթակայ եղող հիւանդները։ Սնուցանում և զօրացնում է նաև շաքարախից, զանազան տենդից, Թանչքից (dysenterie) քաղցկեղից (cancer) և այլ տեսակ ուռոյցքներից հիւծող և մաշուող հիւանդները։ Մեով բանիւ այն ամեն պարագաներու մէջ, ուր անհրաժեշտ է սնուցանել մանր հիւանդները ու թոքախտ ունեցողները և կազդուրիչ սնունդով վերանորոգել նրանց ոյժը, և որոնց համար ոչինչ օգուտ չեն տալիս զանազան տեսակ մսի հեղեները ու ջրերը և հում միսը, Շապօտօի գինին միայն կարող է օգտակար լինել։ Այս գինին ծերերի և մանուկների համար սննդարար հեղեներից ամենաընտիրն է և կաթնատու կանանց կաթն էլ առատացնում է։
Ծախւում է Պարիզ, Վիվիէն փողոց, № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։
(M) բ 30—27

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ
ԳԷՈՐԳ ՉՈՒԲԱՐԻ
1) Բարեգործները.
2) Մի վարդի պատմութիւնը.
3) Մահտեսի Սարգիս.
4) Նա սպասում է գեռ.
5) Ցիմար ոչխարներ.
6) Մոռացուած շուն։
ՎԷՊԵՐՆ ու ՊՕՏԿԵՐՆԵՐԸ
Մի հոգոցամ ամփոփուած
Գինն է 1 րուբլի 50 կոպէկ։
(Խ.) 15—15

ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ 1889 Թ.
Թիֆլիս քաղաքում, Սիօնի եկեղեցու մօտ, Գէորգ աղի քարվանսարայում, ԲԱՑՈՒԱԾ Է ՍԵՊՀԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆ ՊԱՏԻ ՅԱՄԱՅՈՑՆԵՐԻ
առևտրական տան
ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՒԻՉ ՊԵՐԼՈՎԻ, ՄՈՍԿՈՒԱՅԻՑ
3—1

ՐԻԻՀԿ ՄԻՍԱՒԲ ԵՐԱՄՅԵԱՆՑ
ՍԱԼԻՄՆԻՑ ԷՋՄԻԱՉԻՆ
Նկարագիր
ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ
Քսուխներ փոփոխութիւններով
Գինն է 50 կոպէկ
Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Ռ—75

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ
ՔԵԱՐԱՄԻ ԵՒ ԱՍԼԻԻ ՀԵՔԵԱԹԸ
Հանդերձ երգերով
Աշխատասիրեց Աշըգ Ջիւանին. գինն է 60 կ. գումարով առնողներին զիջումն կը լինի։ Յանկացողները կարող են դիմել Ալէքսանդրապոլ, տպարանատէր Գ. Սանոյեանցին։
6—1

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,
Որ իւր ուսումն աւարտել է Իտալիայում, ցանկանում է հաշուապահի պաշտօն ունենալ որ և է վաճառատան մէջ։ Գիտէ հայերէն, ֆրանսերէն իտալերէն, տաճկերէն և մասամբ ռուսերէն։ Պատրաստ է և ուրիշ քաղաք գնալու։ Հասցէն «Նոր-Դար» խմբագրատանը։
2—1

ԹԻՖԼԻՍԻ գրավաճառանոցներում և ՇՈՒՇԻ եղբ. Դադեանց գրախանութում վաճառւում են
Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ
Հետևեալ աշխատութիւնները,
1. Ուղեցոյց գործնական գինեգործութեան, պատկերազարդ, 60 կ.
2. Ռուսական Աշխարհից անմշակ և մշակուած ծառի կեանքը պատկերներով (տարերք այգեգործութեան) . . . 30 կ.
3. Դլըցէ կընանոց պէնը փեշակը . . . . . 20 կ.
4. Շօշվա-Ղալին խէրն ու շառը (Տմբլաչի Խաչան) պատկերով . . . . . 45 կ.
առանց պատկերի . . . . . 35 կ.
5. Փշրանք I (մանկական) . . . . . 15 կ.
6. Ծխախոտը և իւր վնասները . . . . . 10 կ.
ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ
1. Ոգելից ըմպելիների վնասակարութիւնը։
2. Ուղեցոյց գործնական շերամապահութեան (ընդարձակ ձեռնարկ)։
3. Վազի մշակութիւնը Պերքէնդում։
4. Վազը և իւր մշակութիւնը (ընդարձակ ձեռնարկ այգեգործութեան)։
5—1

Дозволено цензурою. г. Тифлисъ, 10-го Мая 1889 Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова